ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

e-mail:ararathnaberd@yandex.ru

հեռ. 098025050

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 17 -Ն

17 սեպտեմբերի 2013 թվական

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.-Ի

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Թույլատրել համայնքի ղեկավարին Հնաբերդ համայնքի 2013 թվականի բյուջեում կատարելու հետևյալ փոփոխությունները .

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

1. Ֆոնդային բյուջեի ընդամենը եկամուտները ավելացնել 1 146.0 հ.դ.-ով և սահմանել 1 829 718.4 դրամ:
2. Ֆոնդային բյուջեի եկամտային մասում ավելացնել նոր կետ՝ Համայնքի սեփականություն համարվող գույքի օտարումից մուտքեր, և սահմանել 1 146.0 հ.դ.:

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

1. Ֆոնդային բյուջեի ընդամենը ծախսերը ավելացնել 1 146.0 հ.դ.-ով և սահմանել 1 829 718.4 դրամ:
2. Ֆոնդային բյուջեի ծախսային մասում ավելացնել նոր գործառնական դասակարգում՝ 06.04.01.51 (Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում), հոդված 5113 և սահմանել ընդամենը 1 146.0 հ.դ.:

Հնաբերդ համայնքի 2013թ.-ի Վարչական բյուջեի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Վարչական բյուջեի ծախսային մասի 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4112 (Պարգևատրումներ) հոդվածից 300.0 հ.դ. տեղափոխել 01.06.01.52 (Գույքի նկատմամբ իրավունքների գրանցում և տեղեկատվության տրամադրում)

գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4241 (Մասնագիտական ծառայություններ) հոդվածի վրա՝ համայնքային սեփականության հողերի չափագրման համար:

2. Վարչական բյուջեի ծախսային մասի 11.01.02.51 (Պահուստային ֆոնդ) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4891 (Պահուստային միջոցներ) հոդվածից 60.0 հ.դ. տեղափոխել 01.06.01.52 (Գույքի նկատմամբ իրավունքների գրանցում և տեղեկատվության տրամադրում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4241 (Մասնագիտական ծառայություններ) հոդվածի վրա՝ համայնքային սեփականության հողերի չափագրման համար:

3. Վարչական բյուջեի ծախսային մասի 11.01.02.51 (Պահուստային ֆոնդ) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4891 (Պահուստային միջոցներ) հոդվածից 20.0 հ.դ. տեղափոխել 05.01.01.51 (Աղբահանություն և սանիտարական մաքրում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4213 (Կոմունալ ծառայություններ) հոդվածի վրա՝ աղբահանություն իրականացնող աշխատողին աշխատավարձ վճարելու համար:

4. Վարչական բյուջեի ծախսային մասի 08.02.04.51 (Մշակութային միջոցառումների իրականացում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածից 110.0 հ.դ. տեղափոխել նույն գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4267 (Կենցաղային և հանրային սննդի նյութեր) հոդվածի վրա՝ բերքի տոնի կապակցությամբ գնված սննդամթերքի դիմաց վճարելու համար:

5. Վարչական բյուջեի ծախսային մասի 10.07.01.54 (Սոցիալապես անապահով անձանց աջակցություն) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4726 (Հուղարկավորության նպաստներ) հոդվածից 100.0 հ.դ. տեղափոխել նույն գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4729 (Այլ նպաստներ) հոդվածի վրա՝ Հնաբերդ գյուղի սոցիալապես անապահով մարդկանց ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

Ավագանու անդամներ՝

Մ. Զաքարյան

Դ. Դավթյանը

Վ. Սիմոնյան

Գ. Կիրակոսյան

Համայնքի ղեկավար Մ. Պողոսյան